ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա:***

1) դափնեվարդ, գիրկընդխառն, հեռաձիգ, բարվոքել
2) պատշգամբ, առնչվել, բարյացակամ, միմիանց
3) անհեթեթ, հեղեղատ, բազրիք, արհավիրք
4) երփներանգ, հղբանալ, պախուրց, գիշերօթիկ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:**

1) բարձր(աշխարհիկ), ի(վերուստ), առ(այժմ)
2) առ(ձեռն), բերնե(բերան), հար(հավիտյան)
3) թեթև(քաշային), հիսուն(երեք), առ(այն)
4) նոր(ջուղայեցի), համ(երկրացի), ի(սպառ)

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն մեկ բաղադրիչն է գրվում մեծատառով:**

1) ՍՈՒԵԶԻ ՋՐԱՆՑՔ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ
2) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ՀԻՆ ՀՌՈՄ, ՄԵԾ ԵՂԵՌՆ
3) ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, «ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆ» ՇՔԱՆՇԱՆ, ԼԱ ՄԱՆՇ
4) ՆՈՐ ՏԱՐԻ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ, ՄԵԾ ՄՀԵՐ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերի տառերի և հնչյունների քանակն է հավասար:**

1) անորոշ, ակնբախ, աստղալից
2) ալեվարս, ապերջանիկ, ինքնաեռ
3) անընկեր, հայորդի, բարձրանալ
4) կայսերապաշտ, մանրիկ, արջառոս

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *երկհնչյունի* հնչյունափոխություն կա:**

1) քրիստոնեություն, անզուգադրելի, քնքշանք, դժգունել
2) անզգուշաբար, բուսաբանական, ուխտադրժորեն, ալրաղաց
3) կառուցապատում, ձկնաբուծարան, կուտակել, կապտականաչ
4) բուրաստան, գուժկան, բնափայտ, դաշունահարել

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) գիրթ, շեշտակի, պիրկ
2) նենգ, խաբեբա, գծուծ
3) սիրալիր, կաթոգին, գորովալից
4) ցանկալի, տենչալի, բերկրալի

7 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) **փող** հնչեցնել-**փող** ծախսել
2) **կետ** որսալ-**կետ** դնել
3) **բարձր** տրամադրություն-**բարձր** շենք
4) ծաղկից **հոտ** քաշել-**հոտ** արածեցնել

8 **Ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում տրված բառերն ու դրանց բացատրությունները:**

ա. տատասկ	1. բուժական խոտերից պատրաստված դեղ
բ. հյուլե	2. փշոտ տերևներով խոտաբույս
գ. սկահակ	3. նվազագույն մասնիկ
դ. բալասան	4. տաք քամի
ե. խորշակ	

1) ա-2, բ-3, դ-1, ե-4
2) ա-3, գ-1, դ-2, ե-4
3) ա-2, բ-1, դ-4, ե-3
4) ա-3, բ-4, գ-2, ե-1

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) դրվագ, փափուկ, թախիծ
2) վիթխարի, միտք, հրավեր
3) արձակ, կայարան, պարտեզ
4) խրճիթ, գետին, դեղձան

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) խճաքար, որմնադիր, բարեգութ, հնավանդ
2) ալեհույզ, գետնանուշ, ծանրաշարժ, թիկնազոր
3) հորդաբուխ, կարեվեր, կաթնասուն, բյուրեղապակի
4) հոգեվիճակ, կորամեջք, հողմավար, գյուղեգյուղ

11 **Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

1) Հասկացրո՛ւ նրանց, որ մարդը ազատ պիտի լինի, որ ոչ ոք իրավունք չունի ուրիշի իրավունքը ջնջելու:
2) Մտազբաղ թափառում էր նա և խորհում էր, թե ինչ ելք գտնի՝ աշխարհը փրկելու համար:
3) Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին. սակայն տեսնենք՝ ինչ է վաղը լինելու:
4) Ես ձեզ ազատության խոսք եմ շեփորում. գնանք, խլենք մեր ապրելու իրավունքը, մեր իշխելու իրավունքը, մեր ազատությունը:

12 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ *չկա:***

1) հացթուխներ, սպաներ, գինեգործներ
2) չվերթեր, բուժկետեր, գործավարներ
3) դաշտամկներ, բեռնակիրներ, լրագիրներ
4) օրհներգեր, մորաքույրեր, տետրներ

13 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հողի գործածություն կա:**

1) Օրբելին շարունակ հուզվում էր ու հուզում բոլորիս:
2) Հե՜յ ագահ մարդ, հե՜յ անգոհ մարդ՝ միտքդ երկար, կյանքդ կարճ:
3) Երբ ցույց էին տվել Չարենցին, վերջինս ասել էր. «Այդ նկարը պետք է ինձ տաս»:
4) Պատանին կանգնեց դիմացս ու առանց աչք թարթելու նայեց ինձ:

14 **Ո՞ր նախադասության մեջ բայի սխալ ձև կա:**

1) Առաջ մի՛ անցի, դու կմոլորվես, Չարի ճամփեքին կկորցնենք իրար:
2) Մարդ չպետք է զբաղվի իր չսիրած գործով:
3) Եթե ուզում ես հաղթողի դերում լինել, պետք է չհավատալ կեղծ խոսքերին:
4) Մի՛ արա ուրիշին այն, ինչ չես ուզում, որ քեզ անեն:

15 **Ո՞ր նախադասության մեջ կրկնադիր շաղկապ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ծով կար նրա մտքում և այդ ծովը ափ էր շպրտում երբեմն սև թավիշե գլխարկով մի գլուխ մազերը կարճ կտրած երբեմն երկարազգեստ մի կնոջ թիկունքին երկար ծամեր:
2) Կարծում էր կգրի մի կարճ պատմվածք կամ մի ակնարկ կամ էլ որոշ ժամանակով գրելը կհետաձգի մինչև բավարար նյութ կհավաքվի ավելի ծավալուն գործի համար:
3) Ինձ պատմել են որ այնտեղ էլ ոչ մի չարխ չի պտտվում ոչ մի կուժ չի շինվում:
4) Փռվեց Ու միշտ քանի որ կա Շահ ու գերի ստրուկ ու տեր Չի լինելու երկրի վրա Ոչ շիտակ խոսք ոչ կյանք ոչ սեր:

16 **Ո՞ր նախադասության մեջ է որոշիչն արտահայտված ածականով:**

1) Հիշողությանս մեջ մնացել է ուրիշ պատմություն՝ կապված այդ օրերի հետ:
2) Սովորություն է դարձել խմելու ջրի վատնումը:
3) Կամրջով անցնելիս նա սիրում էր հետևել ջրերի խաղաղ ընթացքին:
4) Ընկերոջ նվիրած հեռախոսը կորցրել էր:

17 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Ո՞վ պիտի հոգ տանի սովալլուկ որբերի մասին:
2) Շատ մի՛ խորացիր անորոշության լաբիրինթոսում:
3) Ինչքան անիվը վատն է լինում, այնքան մեքենայի աղմուկը շատանում է:
4) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:

18 **Ո՞րն է բարդ նախադասություն:**

1) Արշակը շփոթված մտածում էր այդ լուրը ամբողջ երկրում տարածելու և ամեն տեղ հասցնելու մասին:
2) Չանցած մի քանի վայրկյան՝ ներս մտավ իշխանը՝ ըստ սովորության՝ ձգված կանգնելով բոլորի առջև:
3) Այդպես խոսում էր, բայց և ուշիուշով հետևում մայրաքաղաքում կատարվող բոլոր իրադարձություններին:
4) Ամենքը հետաքրքրված առաջ էին գալիս՝ տեսնելու սպանվածի կնոջը՝ անծանոթ իշխանուհուն:

19 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Նա, որ այդքան փորձառու էր, բանակցությունները վարում էր բացառիկ վարպետությամբ, և չնայած խորամանկությանն ու փորձին՝ Փիլոնը ստիպված էր հստակ ու կոնկրետ պայմաններ հանձն առնել, որպեսզի դիմացինն իրեն խաբված չզգա:
2) Այն ժամանակ, երբ այս անվեհեր հյուրերը տեղավորվեցին դուքսի սեղանի մոտ, Ռաֆայելը, որ երեկ ճաշից հետո ինչ-որ պատրվակով դուրս էր եկել, զգուշությամբ չքացել, ներկայացավ հանդիսավոր դեմքով:
3) Դուք կսարսափեիք, երբ տեսնեիք այս մարդկային դեմքերը, հառաչանք կարձակեիք, երբ հոգնած աչքերով ձեզ դիմավորեին նրանք, ում դուք անսահման կարոտել եք:
4) Հյուրերը, որոնք ցանկանում էին կամաց-կամաց ցրվել, ծանր հառաչանք արձակեցին. նրանք զգացին, որ իրենց թևերն ու ոտքերը թմրել են, և սաստիկ թուլություն են զգում:

20 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Այս ամառ, ըստ կանխատեսումների, շոգ է լինելու, և կարծում եմ՝ ավելի ճիշտ կլինի՝ գործերդ հետաձգես մինչև աշուն:
2) Բոլոր արարածները, որ կան աշխարհում՝ թռչուններ, կենդանիներ՝ վայրի և ընտանի իրենց ծնողներից են ստանում կյանքի առաջին հմտությունները:
3) Եղել է մի քաղաք, և մարդիկ, եզները սայլերին լծած կամ ուղտերին նստած, եկել են այդ քաղաքը՝ առևտուր անելու:
4) Աստված մարդուն տվել է ուշիմություն, բարեփոխվելու հնարավորություն, և մարդը, գիտակցելով այդ, պետք է ձգտի կատարելության:

21 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում դրանց տրամաբանական ճիշտ հաջորդականությանը:**

1. Հենց այդ դարաշրջանում արևի վրա ոչ մի պայթյուն չի եղել. լուսատուն գոյատևել է շատ խաղաղ, ինչը ևս նպաստել է մարդկանց առողջ լինելուն:
2. Այսօր մարդկությունը գիտակցել է, որ «շիկացած գազանի» վրա տեղի ունեցող պրոցեսներից են կախված մոլորակի կլիման և մարդու առողջությունը. մարդու համար խիստ վտանգավոր են մագնիսական փոթորիկները:
3. Գիտնականները նշում են, որ 18-րդ դարը մարդկության պատմության մեջ ամենասառը դարն է եղել. մոլորակի միջին ջերմաստիճանը բավական ցածր է եղել, և դրա հետ է կապված եղել մարդկանց մահացության աննախադեպ ցածր տոկոսը:
4. Ռուս բանաստեղծ Անդրեյ Բելին գուցե տեղյակ էր դրանից և անչափ վախենում էր արևի ճառագայթներից. արևոտ օրերին երբեք չէր զբոսնում և տնից դուրս էր գալիս միայն ամպամած օրերին կամ երեկոները:

1) 3, 1, 2, 4
2) 4, 3, 2, 1
3) 3, 4, 1, 2
4) 4, 1, 2, 3

22 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Ամեն ինչ՝ թագը, գայիսոնը, հարստությունը, կարող է աղավաղել մարդկությունը մարդու մեջ:
2) Նրա պարթև հասակը, հպարտ կեցվածքը այդ պահին մի տեսակ անշուք թվացին:
3) Տերյանի «Մթնշաղի անուրջները» նոր էջ բացեց հայ բանաստեղծության մեջ:
4) Քնելուց առաջ տան դուռը փակում էին կա՛մ պապս, կա՛մ մեծ հորեղբայրս:

23 **Ո՞ր հատվածն է արևմտահայերենով**:

1) Իմ եարն ի յերազիս եկաւ
   ի սիրուն զէտ հարբած եղայ.
   Յանկարծ ի քընոյս ելայ.-
   լուսընկա՜յ, ու խիստ կու ցոլայ:
2) Մտիկ իմ եարին արէք,
   զիս թողեր է՝ զո՞վ կու սիրէ.
   Նման այն իրացն եղեր,
   որ փողոցն որթոտ կու տնկէ:
3) Գերության շղթան ինձ զգալի չէր,
   Եվ ոչ բռնության անգութ ճանկերը.
   Ձեզանից հետո ծանրացան նոքա.
   Ո՛հ, անիծում եմ ես այն օրերը:
4) Կ’ուզեմ մեռնիլ դյուցազնային
   Սիրո մ’ համար աղջկա,
   Հետո աչերս վար կը նային,
   Ո՞ւր է այն Սերն, ա՜խ, չըկա:

24 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Հինգերորդ օրվա վերջում՝ ……., նա հաշվեց, որ նավը դեռ յոթ մղոն հեռու է իրենից, և ինքն անկարող է հասնել նրան:

1) ինքն իրեն հավաքելով
2) ուշ երեկոյան
3) ծովի ալիքների վրա օրորվելով
4) օվկիանոսի խորքում

25 **Ո՞րն էր Դավթի և Փոքր Սասրի մենամարտի պատճառը «Սասնա ծռեր» էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր):**

1) Սասրը, տեսնելով այդ ածդահա մարդուն, ուզում է իր ուժը փորձել՝ նրա հետ գոտեմարտելով:
2) Սասրին դուր չի գալիս, որ իրեն անծանոթ այդ ձիավորը ճանապարհն իրեն չի զիջում:
3) Սասրը զայրանում է, որ մի թուխմորուս մարդ իր ձիու վրա մի երիտասարդ աղջիկ է տանում:
4) Սասրը Դավթից պահանջում է նրա նժույգը և մերժում ստանում:

26 **Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Ամեն մարդ չի կանա խրմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրրեն է.
Ամեն մարդ չի կանա կարդա՝ իմ գիրըն ուրիշ գրրեն է:

1) «Թամամ աշխար պտուտ եկա»
2) «Աշխարումս ախ չիմ քաշի»
3) «Աշխարս մե փանջարա է»
4) «Դուն էն գրլխեն իմաստուն իս»

27 **Ա. Շիրվանզադեի «Քառս» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.**

«19-րդ դարը, սիրելի՛ս, խաբեության դար է, իսկ այդ դարը դեռ չի վերջացել: Այժմ խաբում են ամենքը, և ամենից ավել՝ նրանք, որոնք ըմբոստանում են խաբեության դեմ»:

1) Մարութխանյանի
2) Միքայելի
3) Մարկոս աղայի
4) Սմբատի

28 **Ո՞ր ստեղծագործության հեղինակը Ա. Իսահակյանը *չէ:***

1) «Հրաժեշտի գազել»
2) «Մի մրահոն աղջիկ տեսա»
3) «Ռավեննայում»
4) «Սաադիի վերջին գարունը»

29 **Ո՞ր տողն է բաց թողած:**

Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սրոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
....:

1) Մրսում էր կարծես վայրի նշենին
2) Օրոր էր ասում աշունն անտառին
3) Եվ խոնավ-խոնավ բուրմունքներ կային
4) Տապալված կաղնու խուլ հառաչանքին

30 **Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում ո՞րն է իտալական այն սիրավեպի վերնագիրը, որը թարգմանաբար ներկայացնում է հերոսը՝ վերանվանելով «Նա»:**

1) «Վերելք»
2) «Մի կորած մարդու հիշատակարանից»
3) «Անկում»
4) «Վրեժ»

31 **Ո՞ր պնդումն է ճիշտ Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքի վերաբերյալ:**

1) Երբ հնձվորի կինը թույլ չի տալիս, որ նկարիչն իրեն նկարի, վերջինս անակնկալի է գալիս:
2) Մինչ հնձվորի՝ տուն վերադառնալը երեք ձիավորներն արդեն հեռացել էին վրանից:
3) Հնձվորի տուն են այցելում հնագետը, նկարիչը և քանդակագործը:
4) Հնձվորը մահակը անասելի թափով իջեցնում է տղայի թիկունքին, որովհետև նա պահածոյի տուփ էր վերցրել անծանոթ մարդկանցից:

32 **Պ. Սևակի «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմի ո՞ր տողերը Մաշտոցին *չեն* վերաբերում:**

1) Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե վերջը մի տեղ դառնում է սկիզբ:
2) Այդպես արցունք է ծնվում աչքի մեջ,
Երբ որ աչքի մեջ ընկնում է ավազ:
3) Օտարականի ու հյուրի տեսքով
Ինքն իրեն տարավ աշխարհից աշխարհ:
4) Ժողովրդի մեջ ննջում են Նրանք,
Ինչպես ջրի մեջ՝ ահեղ գոլորշին:

33 **Ո՞ր բառերի վերջին արմատն է միավանկ:**

1. պարզերես, 2. ավարառու, 3. չվացուցակ, 4. պերճաշուք, 5. միջօրեական, 6. միահավասար, 7. հեռատեսություն, 8. տեղափոխել

34 **Նշել այն նախադասությունների համարները, որոնց կազմում համառոտ նախադասություն կա:**

1. Ա՜հ, երջանիկ չի եղել մանկությունս, որովհետև միջավայրը, որտեղ ծնվել եմ, անթափանցելի խավար էր:
2. Իմ մանկության և պատանեկության տվայտանքների աղբյուրը միջավայրն էր, այն մթնոլորտը, որը շնչում էի:
3. Գնում էի մի երկիր, ուր գնում էին շատ-շատերը՝ բախտ որոնելու:
4. Բարեբախտաբար հայրս բացակա էր, ապա թե ոչ ինձ պիտի պատժեր:

35 **Ո՞ր բառազույգերի բառերը հականիշներ *չեն:***

1. բնավ-միշտ, 2. վեհ-նվաստ, 3. աչառու-կողմնակալ, 4. իմաստակ-անգետ, 5. անհարթ-ողորկ, 6. ճապաղ-սեղմ, 7. արգասավոր-անպտուղ, 8. զուսպ-ժուժկալ

36 **Տրվածներից որո՞նք են վերաբերական:**

1. մասամբ, 2. հիրավի, 3. անտարակույս, 4. այլուր, 5. բազմիցս, 6. նույնիսկ, 7. նաև, 8. սոսկ

37 **Ո՞ր նախադասություններում ուղիղ խնդիր կա:**

1. Իր սիրած թագավորի կյանքի հետաքրքիր դեպքերը ժողովուրդը գեղեցիկ զրույցներ դարձրեց:
2. Մեր բարեկամները՝ ուսյալ, անուսում, Անեծքի դիմաց օրհնանք են ուզում:
3. Եթե ինձ հաջողվել է իմ այրվող այգեստանների ծուխը հասցնել մեր մեծ նախնիների ստեղծած փառապանծ կոթողների բարձրությանը, այն ժամանակ ես հանգիստ սրտով կարող եմ ապրել:
4. Եղնիկը էլ չէր փախչում մեզանից. նա արդեն ընտելացել էր մեզ:
5. Ահա սեղանին է դրված նրա երկրորդ գրքույկը՝ «Բուլղար ավազակապետը»՝ գրված բոլորովին վերջերս:

38 **Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Գարնանային գիշերն արդեն կիսվել էր(1) նա դեռ երկար նայում էր անորոշ մի կետի: Հետո տրորեց քունքերն ու վեր կենալով(2) քաշեց գրապահոցի վարագույրը: Սկզբում նա ձեռքը վերցրեց ուղտի(3) դեղնավուն կաշվով պատված նեղ ու երկարուկ տետրը(4) դարչնագույն մանր նոտրագրով լցված: Դրանք ամենօրյա գրառումներն էին(5) երեք-չորս տողից ոչ ավելի: Հետո նա թերթեց այն էջերը որոնք վերաբերում էին իր վաղ պատանեկությանը(6) երբեմն չափից ավելի կանգ առնելով միայն իրեն հայտնի դեպքերի վրա: Այդ պահերին ցավագնորեն կծկվում էր նրա դեմքը(7) մոմի լույսից կաթնավուն դարձած: Չգիտես ինչու(8) նրա հայացքը կանգ առավ գրառումների քսանյոթերորդ էջի պարբերության վրա:

39 **Տրված բառերից քանիսո՞ւմ է գրվում *մ*:**

փա-փուշտ, ա-պաճույճ, ա-բարտավան, ա-բոխ, բա-բասել, ա-բարձիչ, ը-բոշխնել, հա-պատրաստից

40 **Տրված բառերից քանի՞սն են բարդ:**

մթագնում, դառնաղի, դասալիք, ակնթարթ, հակադիր, բերքահավաք, ամրոցամերձ, նորագույն

41 **Տրված բառերից քանի՞սն են ածական:**

բեղմնավոր, մշտապես, ճաղատ, գովելի, սկզբունքային, քննադատական, արտաքուստ, որոշ

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ է *թե*-ն ստորադասական շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):**

- Թե Կարինե Քոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում Ասեք նրան Չարենցն ասաց մնաս բարով մնաս բարով:
- Սոնան մանկության առվակի ջրերն էր կարոտել թե պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին Դիլան դային չիմացավ:
- Լինել թե չլինել այս է խնդիրը:
- Այս քամին է թափում աշնան չոր սաղարթը Թե օղի է թափվում իմ թմրած ուղեղին:
- Ի սրտե գոհ էի որ առիթ ունեի թե հանգստանալու այդ հիանալի առողջարանում թե վայելելու մեծ գիտնականի մտերմությունը:

43 **Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են գոյականական անդամի լրացում:**

Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,
Ու խնդացին **<u>լուսավոր</u>** մեր **<u>աչքերին</u>**,
Բուք հեգնեցին **<u>մեր</u>** կարոտները **<u>հրկեզ</u>**
Ու հեռացան: Ու **<u>ոչ մի</u>** լուր չբերին:

44 **Պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:**

Մշուշների շղարշի տակ
Աշնան խաշամն է խշխշում,
Քամու ձեռքերն անհամարձակ
Ամպի փեշերն են քաշքշում:

համեմատություն, բաղաձայնույթ, փոխաբերություն, չափազանցություն

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ան*** սոսկածանցավոր բայերը ***ա*** խոնարհման են, ***են*** սոսկածանցավոր բայերը՝ ***ե*** խոնարհման:
2. ***Ե*** խոնարհման բոլոր բայերը եզակի հրամայականում ստանում են ***իր*** վերջավորություն:
3. Բայի բաղադրյալ դիմավոր ժամանակաձևեր ունի միայն սահմանական եղանակը:
4. Հրամայական և հարկադրական եղանակները ունեն միայն պարզ ժամանակաձևեր:
5. Սահմանական, ըղձական և ենթադրական եղանակների ժխտականը կազմվում է դրական ձևերին ***չ*** մասնիկ ավելացնելով:
6. ***Ն*** և ***չ*** սոսկածանցները անցյալ կատարյալի կազմության ժամանակ ընկնում են:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը:**

1) չմշկոր-, օ-անցք, եր-վել, զվար-
2) հանդեր-անք, հերար-ակ, տարեդար-, փղ-կալ
3) հաղար-, լա-վարդ, աղ-ամուղջ, բա-կոն
4) գա-տնի, հա-ճապակի, փայծա-, պ-տոր

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ու*-ի հնչյունափոխություն կա:**

1) սրբիչ, շրջադարձ, խնկաբույր, շքամուտք
2) կամրջակապ, հարստանալ, նշաձող, զտել
3) մկնիկ, ընչաքաղց, մանկամարդ, լեզվանի
4) ձվածեղ, բքախեղդ, հրանոթ, մտավոր

48 **Ո՞ր բառի և՛ արմատում, և՛ ածանցում հնչյունափոխություն կա:**

1) միջնագիծ
2) պատմագրական
3) ժողովրդայնություն
4) լրատվություն

49 **Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Տատս թոնրի կողքին էր շարել նոր թխած (1. ջնարակները, 2. նկանակները):
բ. Ժամանակն այդպես էլ չսպիացրեց նրա հոգում մնացած (1. խարամը, 2. խարանը):
գ. Գումարտակը հորդ անձրևից լպրծուն դարձած ճանապարհին (1. ոթում, 2. գայթում) և դժվարությամբ առաջ էր շարժվում:
դ. Այնքան վտանգավոր չէ չվարժեցված երիվար (1. հեծնելը, 2. հեծելը), որքան անփորձ բարեկամին գաղտնիքներ հայտնելը:

1) ա -1, բ -1, գ -1, դ -1
2) ա -2, բ -2, գ -2, դ -1
3) ա -2, բ -1, գ -2, դ -1
4) ա -1, բ -1, գ -2, դ -2

50 **Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:**

1) ***պատին դեմ տալ*** –անելանելի վիճակի մեջ դնել
2) ***գլուխը մտնել***–դժվարությամբ հասկանալ
3) ***ճամփին քար գցել***–սկսած գործը կիսատ թողնել
4) ***ձեռքերը լվանալ*** –հրաժարվել ինչ-որ բանից

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կա փակագծերում նշված ածանցը:**

1) առաջին, առկախ, առնտուր, առինքնում *(**առ-** նախածանց)*
2) արտապատկեր, արտահայտել, արտացոլք, արտագաղթ *(**արտ(ա)-** նախածանց)*
3) մոլորակ, վտակ, ազդակ, խոյակ *(**-ակ** վերջածանց)*
4) կայան, գերան, փական, ծորան *(**-ան** վերջածանց)*

52 **Ո՞ր բառի կազմությունն է սխալ տրված:**

1) ***գերկարճալիք*** – նախածանց+արմատ+արմատ+վերջածանց
2) ***փոխտնօրեն*** – նախածանց+արմատ+արմատ+վերջածանց
3) ***շրջանավարտ*** – արմատ+ածանց+արմատ (առանց հոդակապի)
4) ***բնութագիր*** – արմատ+վերջածանց+հոդակապ+արմատ

53 **Ո՞ր տարբերակում ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Նրանք ամբողջ ամառ տարածքը քաղհանում էին, մոլախոտերին, սակայն, վերջ չկար. մինչև մաքրելով հասնում էին վերջին մարգերին, դեսուդեն նորերն էին ծլարձակում:

1) ***ամբողջ*** – որոշյալ դերանուն, ***դեսուդեն*** – տեղի մակբայ
2) ***մինչև*** – ստորադասական շաղկապ, ***չկար*** – անցյալ կատարյալ
3) ***քաղհանում էին*** – ներգործական սեռի բայ, ***տարածքը*** – տեղի մակբայ
4) ***սակայն*** – վերաբերական, ***ծլարձակում էին*** – ածանցավոր բայ

54 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:**

1) սույն, այնտեղ, այսօրինակ
2) նույնքան, ոչ միայն, մեկմեկի
3) մյուս, երբևէ, ոչ ոք
4) յուրաքանչյուր, բոլորը, ուրեմն

55 **Ո՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ *չկա:***

1) Գյուղացիներից մեկը շինարարության համար քար հանելու ժամանակ գետնի տակից գտնում է զանազան ամանների կտորներ ու այլ իրեր:
2) Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել, վերջը ալիքը Լառ-Մարգարին իր թոռան հետ գցել էր այդ գյուղը:
3) Երբ առաջին անգամ առվով ջուր էր կապել, ոտքերը մինչև ծնկները վեր քշտած, բահն ուսին՝ անցել առվով, գյուղում նրան արագիլի էին նմանեցրել:
4) Կտավատը ժպտում էր կապույտ ծաղիկներով, ծիրանն արդեն դեղնել էր, մասրենու մոտ պառավը կանգնել, իրեն էր սպասում:

56 **Ո՞ր նախադասության մեջ հարադիր բայ *չկա:***

1) Կա՛նգ առ, հողագու՛նդ, Քո պտույտի մեջ Թող մայրամուտը մի քիչ երկարի:
2) Ամպերը դարձել գթության քույրեր, Ջրվեժի վրա ջուր են շաղ տալիս:
3) Ջանք է անում ամեն մինը՝ Շուտով տանի, տիրանա:
4) Գործն է անմահ, լա՛վ իմացեք, Որ խոսվում է դարեդար:

57 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Տարիներ առաջ Սև ծովի ափին տեղադրվեց լազերային մի փարոս, որի ճառագայթը դիտվում է 35 կմ հեռավորությունից ցանկացած ժամանակ, նույնիսկ թանձր մառախուղի դեպքում:
2) Հնդկաստանի նահանգներից մեկում կա մի տաճար, որտեղ ապրում են հարյուր հազար «սուրբ» առնետներ. տաճարը նման է բերդի, որը վարպետությամբ սահմանազատված է աշխարհից պերճաշուք պարիսպներով:
3) Գիշերը մշտապես հավաքվում են գյուղի կատուները, և նրանցով կարելի է հաշվել, թե քանի ծուխ ունի Անտառամեջ գյուղի տերտերը:
4) Երկար տարիներ լինելով հայրենիքից հեռու՝ նա տառապում էր մի հիվանդությամբ, որ կոչվում է կարոտախտ:

58 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Նա շատ էր տխրում, որ հնարավորություն չուներ բնակվելու բնության այդ խաղաղ անկյունում: *(տեղի պարագա)*
2) Նահապետ Քուչակի քերթությունը ապացուցում է, որ մեր ժողովուրդն ընդունակ է կենսուրախության ու մեծ թռիչքների: *(ուղիղ խնդիր)*
3) Եվ կրկին հիշողության հեռավոր ծալքերում արթնացավ նա, ումից բաժանվել էր ինքը պատանության տարիներին: *(ենթակա)*
4) Նրանք ծանոթացան այն օրը, երբ Աստղիկը կայարան էր գնացել՝ ամուսնուն դիմավորելու: *(որոշիչ)*

59 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *«Մակբեթի» մեջ Շեքսպիրը հանգում է այն գաղափարին, որ մարդու մեջ անհաղթահարելի է փառամոլության ձգտումը:*
«Մակբեթի» մեջ Շեքսպիրը հանգում է մարդու մեջ փառամոլության ձգտման անհաղթահարելիության գաղափարին:
2) *Ծագող արևի առաջին ճառագայթներն ընկան մերձակա բլրի արևելյան լանջին, որը ծածկված էր սաղարթախիտ անտառով:*
Ծագող արևի առաջին ճառագայթներն ընկան մերձակա բլրի՝ սաղարթախիտ անտառով ծածկված արևելյան լանջին:
3) *Այդ նավը, որ ժամանակին փրկության լաստ էր դարձել ինձ համար, վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:*
Ժամանակին ինձ համար փրկության լաստ դարձած նավը վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:
4) *Արքայորդին, երբ ազատվեց այդ աղջկա կապանքներից, ավելի եռանդով սկսեց զբաղվել իր հետաձգված գործերով:*
Այդ աղջկա կապանքներից ազատվելուն պես արքայորդին ավելի եռանդով սկսեց զբաղվել իր հետաձգված գործերով:

60 **Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ կա:**

1) Բախտի ճամփեքը տարբեր են լինում. Բախտն ամեն մեկին սիրում է տարբեր:
2) Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան, Եվ այնքան ներում՝ ո՞ր երկրի սրտում:
3) Անցա՜ծ օրեր, խի՛նդ ու սե՛ր, դարձե՛ք, իրար հետ եկե՛ք:
4) Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝ Վիճակ հանելու աշխույժ երգերով:

61 **Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված *չկա:***

1) Նավթի հետ գործ ունենալու պատճառով նրան տվել էին Մազութի Համո մականունը:
2) Աչքը խանութի պատերից կախած գույնզգույն հագուստներին էր:
3) Խոնարհվելով բարևելը սովորություն էր դարձրել:
4) Ընկնելով ու վեր կենալով շարունակում էին երթը:

62 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ձևի պարագա:**

1) **Ընչակտուր** փախչում եմ դեպի անտառի բացատը:
2) **Երբեմն** հիշում էր անցած-գնացած օրերը:
3) Բացեց պատուհանը և սկսեց դիտել **հետաքրքիր** խաղը:
4) Այդ հարցը քննարկվել է **շատ անգամ**:

63 **Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Մեծ ճիգով կրակը ……. ՝ մարդիկ տեսել են, որ ծառի մեջ ……. ածխացած մի հսկա վերք, ……. մոմերի ……. վերքը:

(հանգցնել, մնալ, այրվել, բացել)

1) հանգցնող, մնաց, այրվող, բացած
2) հանգցնելիս, մնաց, այրվող, բացվող
3) հանգցնելով, մնացել է, այրված, բացած
4) հանգցնելիս, մնացել է, այրված, բացվող

64 **Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծությունից է հետևյալ հատվածը:**

Նայում եմ, մինչև որ անզոր
Գլուխս ծնկիդ է թեքվում,
Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում:

1) «Տխրություն»
2) «Կարուսել»
3) «Կարծես թե դարձել եմ ես տուն»
4) «Որպես Լաերտի որդին»

65 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նա ջանում էր հասկանալ ինչ կա այդ մարդկանց մտքում:
2) Նրա հայրը բարձրահասակ մի տղամարդ էր խիստ դիմագծերով:
3) Դպրոցն ավարտելու առթիվ նվերներ էր պատրաստել և դրանց հանձնումը առավել հանդիսավոր դարձնելու համար սպասում էր թոռան ծննդյան օրվան:
4) Հեռավոր ճամփորդությունից շուտով վերադառնալու են նրա երկար տարիներ բացակայած եղբայրները:

66 **Հ. Թումանյանի «Փարվանա» բալլադի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ *չկա:***

1) Ծեր արքան աղջկան հորդորում է այլևս չսպասել քաջերին:
2) Փարվանա արքայադստեր համար տեղի է ունենում մրցություն, սակայն աղջիկը չի ցանկանում ամուսնանալ դաժան պայքարում հաղթանակած քաջի հետ:
3) Աղջիկը քաջերից պահանջում է կա՛մ երկնքից աստղեր իջեցնել, կա՛մ անշեջ հուրը բերել:
4) Աղջիկը երկար տարիներ սպասում է քաջերին, սակայն նրանք այդպես էլ չեն վերադառնում:

67 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Մարդկանց գիտելիքներ շնորհած աստվածներից շատերը ավանդապատումներում պատկերվել են հսկաների տեսքով: Այդպիսիք են եգիպտական Սեթը, արաբական Շեդդ Ադ-Բեն-Ադը, հունական Պրոմեթևսը: Այդպիսի էակների մասին տեղեկություններ կան և՛ինկերի, և՛ աֆրիկացիների, և՛հնդիկների, և՛այլ ժողովուրդների մեջ, և՛ Ղուրանում, և՛ Աստվածաշնչում, և բոլորում էլ նրանց գոյությունը կապվում է նախատապանյան կամ նախասառցապատման ժամանակների հետ: Ենթադրության կա, որ երկրագնդի վրա ապրել են նման հսկաներ, որոնք, ակնհայտ է, երկրաբնակներ չեն եղել, և նրանց հասակը բացատրվում է իրենց մոլորակի ձգողության ուժի թուլությամբ կամ ջրի և այլ սննդատեսակների մեջ կալցիումի շատ մեծ քանակով: Գուցե դա մի այնպիսի մոլորակ է եղել, որի զանգվածը Մարս մոլորակի նման տասն անգամ փոքր է եղել Երկրի զանգվածից: Նրանց մասին տեղեկություններ կան անգամ Պլատոնի՝ Ատլանտիդայի, Լեմուրիայի մասին թողած վկայություններում: Փաստեր կան նմանատիպ տասը քաղաքակրթությունների մասին, որոնք եղել են չափազանց զարգացած, նրանց ներկայացուցիչները ամենայն հավանականությամբ տիրապետել են լազերային բարդ սարքավորումներին, թռչող սարքերին: Միայն այդպիսի հսկաների գոյությամբ կարելի է բացատրել եգիպտական կուլտուրայի, բուրգերի, ինկերի կամ ացտեկների քաղաքակրթության զարգացածության գաղտնիքը: Կա վարկած, որ տասը քաղաքակրթություններն էլ ատոմային պայթյունից են ոչնչացել, և համաշխարհային օվկիանոսը գուցե նրանց հետ կապված լուրջ գաղտնիքներ է թաքցնում:

1. Համաշխարհային օվկիանոսի ուսումնասիրությունը կարող է հանգեցնել հսկաների քաղաքակրթությունների վերաբերյալ նոր բացահայտումների:
2. Ենթադրություններ կան այն մասին, որ Ատլանտիդայում ապրել են հսկաներ, որոնք ստեղծել են բարձր զարգացած քաղաքակրթություն:
3. Երկրի վրա վաղնջական ժամանակներում կալցիումի մեծ քանակի առկայությամբ է բացատրվում հնագույն հսկաների՝ մեծ չափեր ունենալը:
4. Ըստ Պլատոնի վկայության՝ Լեմուրիայի և Ատլանտիդայի հսկայամարմին մարդիկ ատոմային կռիվներ են մղել Ամերիկայի և Աֆրիկայի բնիկների դեմ:
5. Աստվածաշնչի և Ղուրանի համաձայն՝ հսկաները երկիր են հասել Մարսից և ջրհեղեղից առաջ ապրել են սովորական մարդկանց հետ կողք կողքի:

68 **Ո՞ր նախադասություններում անուղղակի խնդիր կա:**

1. Տարիներ հետո, երբ ոտքս նորից ընկավ Օդեսա, շատ որոնեցի ծերունուն, բայց չգտա: 2. Նայեցի նրա վաղեմի բնակարանին: 3. Վերհիշեցի նրա բոլոր խոսքերը:
4. Ո՞վ գիտի, ո՞ւր է նա. արդյոք մարդկանց կոշիկները կարկատո՞ւմ է իր հին ասեղով: 5. Թե՞ պատմում է գոյության կռվի դաժան ալիքների մասին: 6. Աչքերիս առաջ երևաց թոռնիկը ու ժպտաց ինձ:

69 **Ո՞ր նախադասություններում թվական կա:**

1. Եվ մի հատիկ իմ այս աչքով Շատ եմ տեսնում, Ավելի շատ:
2. Երեկոյան, երբ մենք բաց էինք թողնում մեր թռուցիկները, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:
3. Աջ ու ձախ պտտեմ մի երրորդ կոճակ, Եվ մութը իսկույն հին չարքի նման Չքվի, չքանա:
4. Ա՜խ, իմ մեծ սերը. Նա հավասար է Կորած հույսերիս ճիշտ քառակուսուն:
5. Ի՜նչ զարմանալի աչքեր ունես դու, Կարծես թե լինեն երկվորյակ լճեր Հին հրաբխի զույգ խառնարանում:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ոչ միայն բայերը, այլև ածականները կարող են ունենալ չափի պարագա լրացում:
2. Նպատակի պարագան ձևավորվում է միայն կապական կառույցներով. առանց կապի՝ միայն որևէ հոլովաձևով, այն չի կարող արտահայտվել:
3. Չևի պարագան կարող է արտահայտվել ցուցական դերանունով:
4. Ժամանակի պարագան կարող է արտահայտվել բացառական, գործիական հոլովներով:
5. ***Համար*** կապով չի կարող ձևավորվել պատճառի պարագա:
6. Չիջման պարագան կարող է ձևավորվել ***փոխանակ*** կապով: